ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/0775/02/25 ք. Երևան
7 Փետրվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ՝ նաև Դատարան), քննարկելով ըստ հայցի «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Երրորդ անձ)՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 17.08.2023թ. թիվ 76 որոշման հիմքով «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը՝ ՀՀ

պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 17.08.2023թ. թիվ 76 որոշման հիմքով «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգով դատարան ներկայացվել է 27.01.2025 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/0775/02/25 քաղաքացիական գործը, որը **մակագրվել** և **հասանելի է** դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **29.01.2025 թվականին**:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու **պատվիրատուի**, **գնահատող հանձնաժողովի** գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը **բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները**:

Գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

(...)

Սույն դեպքում նկատի ունենալով այն հանգամանքը, որ չի վիճարկվում **պատվիրատուի**, **գնահատող հանձնաժողովի** գործողությունները (անգործությունը) և որոշումները, ուստի ներկայացված հայցադիմումն ենթակա չէ քննության «Գնումների հետ կապված վեճերով վարույթը» վերնագիրը կրող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխի կանոններով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 121-րդ, 122-րդ, 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 17.08.2023թ. թիվ 76 որոշման հիմքով

«Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2025.02.07 15:07:09 AMT **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am